

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
2024

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ. ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

ԹԵՍՏ

ՍԱՐՁ -----

ՔԱՂԱՔ/ԳՅՈՒՂ -----

ԴՊՐՈՑ -----

ԴԱՍԱՐԱՆ -----

ԱԶԳԱՆՈՒՆ -----

ԱՆՈՒՆ -----

ՀԱՅՐԱՆՈՒՆ -----

ՀԵՌԱԽՈՍ -----

ԷԼՓՈՍՏ -----

*Մի րեկի՛ աշակերտ, թեստը բաղկացած է 40 հարցից: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 0,5 միավոր: Պատասխանները ուշադիր լրացրու վերջին էջում, որը և ենթակա է ստուգման:*

*Մաղթում ենք հաջողություն:*

1

**Տրված շարքերից որո՞նց բոլոր բառերում է բաց թողած միևնույն տառը:**

1. խա-ամ, դ-խուհի, օ-արակ, պատ-գամբ
2. թա-ցնել, փա-ցնել, տարեր-, լայնափող-
3. գար-ուղի, փեր-, որ-ատունկ, ար-մնի
4. վար-ակ, խոտհուն-, փղ-կալ, խուր-
5. խա-կանք, խարխա-ել, ջրար-ի, ող-անվագ
6. սանդու-ք, ու-տափուշ, ե-կելի, փայծա-
7. կ-ծել, գա-շել, ապա-ռշ, թրթու-
8. մատ-վակ, պո-թկալ, պա-կել, պա-ակտել
9. բա-բիռ, բա-բեր, բա-բասել, ա-բրոս
10. ճրագալույ-, ցն-ել, ժամասա-ություն, ցն-ություն

2

**Տրված բառերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա.**

քսուք, հայթհայթել, պախուրց, խորհին, փասյան, թիկնոթոց, մտացածին, ժայթքել, խրթվիլակ, վարաքիչ, պակսիմատ, տաղտկություն, ախտալլուկ, կորնթարթ, ճտքավոր, արքատրդի, գիլոտին

3

**Ո՞ր շարքերում կա բառ, որը հոգնակի դարձնելու դեպքում հնչյունափոխություն տեղի չի ունենում:**

1. վարդաջուր, թիմ, երկիր, սալորաչիր
2. արկղ, ծրագիր, բույն, սիրտ
3. գինետուն, տուփ, ազդր, քուրմ
4. ձուկ, վիհ, տետր, խաղաթուղթ
5. շիկամուկ, վագր, քաղաքադուռ, ձիրք

4

**Ո՞ր շարքի բոլոր բառերն են գրվում գծիկով:**

- 1) կենաց(մահու), ալ(կարմիր), ուրախ(զվարթ), տալ(առնել)
- 2) (Տեր)Գրիգորյան, ջրմուղ(կոյուղի), քաղաք(ամբոց), դույզն(ինչ)
- 3) ունեցած(չունեցած), ուսանող(ուսանողուհի), շիլա(շփոթ), ստորակետ(գիծ)
- 4) սուս(փուս), պատեհ(անպատեհ), չորս(հինգերորդ), քաշել(քաշքշել)

5

**Ո՞ր շարքում ուղղագրական սխալ չկա:**

- 1) Երևանի Մատենադարան, Հայկական լեռնաշխարհ, Կուլոնի օրենք, Մարտական Խաչ շքանշան
- 2) Կիրակոս Գանձակեցի, Չանգեգուրի լեռնաշղթա, Իրանական լեզուներ, Մարտի ութի շնորհավորանք
- 3) Լեռ Կամսար, Հեռավոր Արևելք, Հյուսիսային Իռլանդիա, Նոր Նախիջևան
- 4) Լորդերի պալատ, Հասարակածային Գվինեա, Դամոկլյան սուր, մաշտոցյան այբուբեն

**6** **Բառերից քանիսի՞ վերջին արմատն է բազմավանկ:**

ծանոթագրություն, մեծապատիվ, գաղտնաձայն, նվիրատվություն, ռազմաճակատ, լեղածորան, ծանրակշիռ, գեղագանգուր, խորագին, մեծաշնորհ, բարեխնամ, մելամաղձոտ

**7** **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

- 1) գիտուն-ինաստակ, անխոհեմ-ողջախոհ, ուժանալ-հարազատանալ
- 2) բուժիչ-սխտածին, օրհնել-բանադրել, կարծրատիպ-ազատախոհ
- 3) ողորձել-համոզել, աչառու-անկողմնակալ, մեղանշել-ապաշխարել
- 4) քանքարավոր-տաղանդագուրկ, ոգորել-մաքառել, պիղծ-սուրբ

**8** **Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

- 1) **աչք ածել** - շուրջը նայել, **սայիտակ ագռավ**-չտեսնված բան
- 2) **կոտր ընկնել** - հակառակվել, **դեմ առնել** - հանդիպել
- 3) **ուղտը պոչով կուլ տալ** - գոփող լինել, **օձի կծած** - չար և անգութ
- 4) **սրտին գալ** - նեղանալ, **խաղաթղթերը խառնել** - ծրագրերը խափանել

**9** **Բառերից քանիստ՞ն ածանցի հնչյունափոխություն կա:**

պատմական, հետնադուռ, գործնական, վայրենաբար, համակրելի, հարստահարիչ, կապուտաչյա, անասնապահ, թաքստոց, մարդկություն, եղջերավոր, հանգստյան, մատուցարան

**10** **Ո՞ր շարքերում բառի սխալ բացատրություն կա:**

1. **գուր**– խորունկ փոս, **պայազատ**– ազնվական տոհմի ժառանգ
2. **թանգիլ**– թույլ, նոսր գործվածք, շղարշ, **սրդողել** – բարկանալ
3. **զմուռու**– հեշտ հավվող և սառչող խեժ, **որձաքար** – ամուր քար
4. **ռահվիրա**– ճանապարհ բացող, **արամբի** – սև ձի
5. **որոմ**- բարակ պատ, **սամույր** -կզաքիսների դասին պատկանող կենդանի

**11** **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ:**

- 1) ոչինչ, ասուլիս, հովել, գետնուղի
- 2) այլազգի, ոսկեդար, բյուրեղապակի, հեծանիվ
- 3) սիգապանծ, ջրածին, սիրամարգ, քեռայր
- 4) օդաչու, քաղցրահունչ, սարալանջ, ջերմագին

**12** **Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա:**

1. Մի շարք երկրներում ընդունված է եղել շուշանի պատկերով խարամ դնելը:
2. Վանատուրը՝ իբրև աստված, խորհրդանշել է հայ մարդու աստանդականությունը:
3. Պետրոս Կամսարյանը թյուր կարծիք ուներ հայ գյուղի ու նրա կենցաղի մասին:
4. Արարատի բարձունքից մեր առջև հառնեց Արագածը՝ սայիտակափառ զագաթով:

5. Վարորդի համբերությունը արդեն հասնելու վրա էր, երբ դեպքի վայր ժամանեց ավտոտեսուչը:
6. Խորապես ընդունելով իր սխալը՝ Հայկը փորձում էր քաղել մեղքերը:
7. Մտավորականության փաղանգը հավաքվել էր այդ հրաշալի միջոցառմանը:
8. Ամբոխը, որոշակի հույսեր փայփայելով, խռնվեց հայտնի բարերարի շուրջը:

**13** Նշել այն բառերի համարները, որոնք կրկնավոր բարդություն դարձնելիս փոխում են իրենց խոսքիմասային պատկանելությունը:

1. շերտ, 2. մարդ, 3. գույն, 4. հինգ, 5. փունջ, 6. աման

**14** Բայերից քանի՞սն են կազմությանը պարզ (առանց բայական ածանցի):

*տանել, կեղտոտել, պարծենալ, փախցնել, ձերբազատել, ելնել, մթնել, պատռտել, հանգչել, երկնչել*

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) երեքը

**15** Ո՞ր շարքի բոլոր բառերն են անհոդակապ:

- 1) լողավազան, հմայագեղ, փաստարկել, վիպասան
- 2) ընդամենը, հերարձակ, կնատյաց, կարեվեր
- 3) բազմադետ, ստահակ, ոսկրախտ, շաքարավազ
- 4) դարեդար, քարածուխ, քաջագուն, բնավեր

**16** Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայի՝ խոնարհման կանոններից շեղվող ձև կա:

- 1) Մթնածոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում:
- 2) Միրով ընդունեցի բարեկամիս առաջարկը. ուսուցիչ պիտի լինեի այդ գյուղում:
- 3) Որքա՞ն ուրախացա, երբ ինձ թողեցին մասնակցել այդ հանդեսին:
- 4) Պատահմամբ նայեց մեր կողմը. տեսավ ինձ, հեռացավ կտուրից և խառնվեց աղջիկների խմբին:

**17** Ո՞ր շարքերում տրված եղանակին չպատկանող բայ կա:

1. չեմ գրելու, չունեմ, ունենում էի, սիրել եմ-*սահմանական եղանակ*
2. պատմեմ, չկարողանանք, չպարեցի, չգնայիր-*ըղձական եղանակ*
3. կհավատաս, չեմ գա, կաղաչեի, չէինք ների-*ենթադրական եղանակ*
4. պիտի զգամ, պետք է հսկենք, չպիտի գրի, պետք է լռել- *հարկադրական եղանակ*

**18** Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ ձև *չկա*:

- 1) Բանախոսի դեմ ելույթ էին ունեցել երկու տեղացի նկարիչներ, ոմն արվեստագետ Ֆրանսիայից և այլոք:
- 2) Հասկանո՞ւմ եք, ոչ մեկ չփորձեց օգնել ինձ, երբ մենակ էի ու անօգ:

- 3) Չգիտեմ՝ ո՞րո՞ղ կարող է գլուխ հանել այդ խճճված գործից:
- 4) Ոչնչից և ոչ ոքից այնքան չէր զգուշանում, որքան իրեն անճանական թիկնապահից:

**19** Ո՞ր շարքում դերբայական սխալ ձև չկա:

- 1) փթթած, նստած, խոսացած, կպած
- 2) ծխող, ծխացող, մարմրող, փախնող
- 3) թռչելիս, ծիծաղալիս, դիպչելիս, հոգնելիս
- 4) խոնավացնել, թարմացնել, նստեցնել, սովորեցնել

**20** Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:

- 1) Խառնվել է գլխում հին ու նորը, միտքը սառել է, և իմացածը թռել է հիշողությունից:
- 2) Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և թվում է, թե փրկության ուղի չկա, և հանկարծ ցուլում է վիթխարի մի կրակ:
- 3) Երբ բակ մտա, ինձ այնպես թվաց, թե սպիտակ տան ներսում ինչ-որ մարդիկ են հավաքվել, ու մեկը, իր ափերից դուրս եկած, գոռոռում է:
- 4) Բայց, ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որն անհրաժեշտ էր գյուղին:

**21** Ո՞ր շարքի բոլոր բառերն են համապատասխանում նշված խոսքի մասին:

1. սրտմաշուք, շանթարգել, գուպար, շաչյուն- գոյական
2. յոթերորդ, տրիլիոն, տասնյակ, քսանական- թվական
3. համայն, միվյանց, ոմն, միմիայն – դերանուն
4. ի դեմս, ի տրիտուր, ի գեն, ի շահ - կապ
5. մինչդեռ, թե չէ, այլապես, կամ- շաղկապ
6. քառատրոփ, հանկարծ, դժբախտաբար, հնուց- մակբայ
7. թերևս, իսկևիսկ, լոկ, արդարև- վերաբերական

**22** Որո՞նք են տուն բառի բառաձևեր:

1. տներ, 2. տանս, 3. տնային, 4. անտուն, 5. տնից, 6. տնետուն, 7. տունդարձ, 8. տներով, 9. տնակ

**23** Ո՞ր շարքում են միայն անկախ դերբայներ:

- 1) թրթռացող, վախեցած, սառել, փախչելիս
- 2) կարողանալ, հարստացրել, կպած, ստուգվող
- 3) գայրացնելով, կռացող, երթևեկելիս, ծուլացած
- 4) արտասանի, թվոռացող, գտած, քնեցնելիս

**24** Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:

- Մեր գրականության երախտավորների մասին նրա գրածը անվերապահ վստահության է արժանի:  
Այն, ինչ գրել է նա մեր գրականության երախտավորների մասին, անվերապահ վստահության է արժանի:

- *Ի՞նչ գիտեի հայության մասին ես՝ հայրենիքից հեռու՝ օտար միջավայրում ապրածս:*  
Ի՞նչ գիտեի հայության մասին ես, որ ապրել էի հայրենիքից հեռու՝ օտար միջավայրում:
- *Մեր քաջարի որսորդները խոշոր ու վտանգավոր որսի հանդիպելիս հրացանը հենում են կենդանու եղջյուրների վրա ու կրակում:*  
Երբ մեր քաջարի որսորդները խոշոր ու վտանգավոր որսի են հանդիպում, հրացանը հենում են կենդանու եղջյուրների վրա ու կրակում:
- *Ճերմակ մորուքով զարդարված նրա բարի դեմքը հմայք էր տալիս ծերունի վարպետին:*  
Ծերունի վարպետի բարի դեմքը, որ զարդարված էր ճերմակ մորուքով, հմայք էր տալիս նրան:
- *Քննադատության հանդեպ նրա արհամարհանքը առաջ էր եկել նախկինում անարդարացի քննադատության ենթարկվելուց:*  
Քննադատության հանդեպ նրա արհամարհանքն առաջ էր եկել, երբ նախկինում անարդարացի քննադատության էր ենթարկվել:
- *Թիֆլիսը սիրեց ինձ իմ ծննդավայրը մոռանալ տալու աստիճան:*  
Թիֆլիսը սիրեց ինձ այնքան, որ մոռացա իմ ծննդավայրը:

**25** **Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:**

1. Մեղավորը հայրս է եղել. անճնագրային սեղանի մոտ կանգնած՝ նա մի պահ մոռանում է մորս ազգանունը և անակնկալի եկած՝ ասում միտքը եկած առաջին ազգանունը:
2. Մի օր էլ Լևոնը (տանը Լուր էինք անվանում) իր դասընկերներին՝ յոթ-ութ տղաների, հավաքել և բերել էր մեր հյուրասրահը՝ զվարճանալու:
3. Տղան պատրաստվեց կոտրել նրա համառությունը՝ մանավանդ տեսնելով՝ վերջինս խորտակում է իր քառասնամյա վաղեմություն ունեցող հեղինակությունը:
4. Գոգոն ձայն-ծպտուն չհանեց ոչ թե նրա համար, որ չէր կարող պատասխանել, այլ լցվեց դառը վշտով. քառասուն տարի ծառայել էր այս տանը, հենց իրեն՝ Լևոնին մեծացրել էր իր թևերի վրա:
5. Անահիտը ժպտալով նայեց մեզ և գլխով թեթևակի նշան անելով՝ հրավիրեց պարի. Երվանդը թռավ դեպի նա և սուզվեցին հորձանքի մեջ:
6. Չզալով զարնան համբույրը, լսելով ձիերի աշխույժ խրխնջյունը, գունձների լիաթոք բառաչը՝ Պետին՝ բնությանը սիրահարված այդ երիտասարդը, բնության գրկում լինելով, կենդանական հաճույք էր զգում:

**26** **Քանի՞ բույս պիտի դրվի տրված հատվածում:**

Մշուշը լեռներից կիրճն էր իջել թավալգոր լցվելով ձորը լեռների գլխին հիմա գորշ ամպեր էին կուտակվում իսկ արևը ծիկրակում ցրիվ ամպերի արանքից հրաշք էր: Հազրոյի հայացքի դիմաց լույսի ու ստվերի խաղ էր ծառի շուրջը շուրջը ողողված էր արևով իսկ քիչ այն կողմ ստվեր էր խոնավ ու մութն առած: Լույսը ստվերն էր շեշտել ստվերը լույսը: Անսովոր պայծառ շողեր էին գունեղ թրթռուն և թվում էր ծառի շուրջը շուրջը ծիածաններ էին քանդվում ու հյուսվում: Իսկ ներքևի կածանում լույսը պահմտոցի էր խաղում: Հազրոն հասկացել էր ինչու է ծառն այսպես երկար ապրել համառ կանգնել տարիներ: Մնացել էր որ տեսնի ինչպես է խաղում լույսի ստվերը մի կաթ ջրում:


**27** Նշվածներից որո՞նք կան տվյալ հատվածում (հատվածը կետադրված չէ):

*Երբ երգչուհին դուրս եկավ թատրոնից երկրպագուներով շրջապատված Իցկոն բարձր աղաղակեց: Չաուշենկոն ձեռնափայտով հետ մղելով նրան մոտեցավ երգչուհուն և տվեց նրան իր ձեռքի հուզմունքից ճմռթած թուղթը: Անշուշտ այդ նրա ոտանավորն էր հատկապես օրվա առիթով գրված:*

1. բացահայտիչ
2. տրոհվող հատկացուցիչ
3. տրոհվող դերբայական դարձված
4. տրոհվող որոշիչ

**28** Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

*Նա ուզում էր անպայման շարունակել որոնումները, բայց ոտքերն այնպես էին դողում, սիրտն այնքան արագ էր զարկում, աչքերին այնպիսի մշուշ էր իջել, որ ստիպված եղավ կանգ առնել:*



**29** Տարբերակներից քանիստ՞ն ժամանակի պարագա ստորադաս նախադասություն կա:

- Մինչև անձրևը կսկսվեր, տղաները հասցրին իրերը հավաքել:
- Չայները լռեցին թե չէ, նա դանդաղ առաջացավ դեպի հակառակորդի դիրքերը:
- Չարմանալի է, երբ իրար քծնում են նախկին հակառակորդները:
- Քանի որ չէր հաստատվել մրցաշարի մեկնողների ցուցակը, հենց ես էի ամենից ավելի անհանգիստ վիճակում:

**30** Բարդ նախադասություններից որի՞ ստորադաս նախադասությունը բայական անդամի լրացում չէ:

- 1) Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին:
- 2) Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ, Երբ ամեն ինչ երագում է հոգու հետ:
- 3) Թեպետ սրտովս չէր, բայց չմերժեցի:
- 4) Եթե ուզեն, արեգակներ կշարտեն երկինքն ի վեր:

**31** Անուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են ճիշտ:

- *Դիմելով հրամանատարներին՝ գեներալն ասաց, որ ինքը զարմանում է, թե ինչու է ռազմաճակատում անհաջողությունը հետապնդում իրենց:*  
Դիմելով հրամանատարներին՝ գեներալն ասաց.  
- Չարմանում եմ, թե ինչու է ռազմաճակատում անհաջողությունը հետապնդում ձեզ:
- *Տեր Մարտիրոսն ասաց, որ նրա խոսքերից հանգստացավ և իր ատրճանակը պահում է վերջին օրվա համար:*  
- Նրա խոսքերից հանգստացա և ատրճանակս պահում եմ վերջին օրվա համար,- ասաց տեր Մարտիրոսը:
- *Նա ինձ հիշեցրեց, որ մենք ծանոթացել ենք անցյալ տարի, երբ նույն գնացքով վերադառնում էինք. ես՝ մեր փորձակայանից, ինքը՝ իրենց ամառանոցից:*  
- Մենք ծանոթացել ենք անցյալ տարի,- հիշեցրեց նա ինձ,- երբ նույն գնացքով վերադառնում էինք. Դուք՝ Չեր փորձակայանից, ես՝ մեր ամառանոցից:
- *Օրիորդ Սահակյանը Եվալին ասաց, որ ինքն այսօր նամակ է ստացել Աշխենից. տոներին նա այցելելու է իրենց:*  
- Եվա,- ասաց օրիորդ Սահակյանը,- այսօր նամակ եմ ստացել Աշխենից. տոներին նա այցելելու է մեզ:

32

**Նախադասության անդամների ձևաբանական վերլուծության տարբերակներից քանիստ՞ւմ սխալ կա:**

*Իր տիտանական տաշտի մեջ հանդարտ ու մեղմորեն օրորվում էր հայոց երկնակարկառ լեռների լազուր թագուհին՝ Գեղամա կապուտաչ ծովակը՝ ոսկեգօծ մակերևույթի անդորրության տակ թաքցնելով այլեհույզ հոգու խռովքը:*

- **իր**-անձնական դերանուն, տրական հոլով, **հանդարտ**-մակբայ
- **անդորրության**-գոյական, **ա** ներքին հոլովում, **լազուր**-ածական
- **օրորվում էր**-անկատար անցյալ, կրավորական սեռ, **թագուհին** -գոյական, որոշյալ առում
- **թաքցնելով** -անորոշ դերբայ, ներգործական սեռ, **լեռների**-գոյական, **ի** հոլովում

33

**Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության տարբերակներից որոնցո՞ւմ սխալ չկա:**

*Լեռների ու անտառների հարուցած դժվարությունների պակասը ի վերջո լրացնում էին գետերը, որոնք անցնում էին քարեղեն խորին հատակի վրայով և երկու կողմերից պարիսպների նման ժայռերի միջով:*

1. **հարուցած** – որոշիչ, **դժվարությունների** – հատկացուցիչ
2. **պակասը** – ուղիղ խնդիր, **լրացնում էին** – պարզ ստորոգյալ
3. **գետերը**-ենթակա, **երկու**– որոշիչ
4. **որոնք**-ենթակա, **ի վերջո** – ժամանակի պարագա
5. **պարիսպների նման** – ձևի պարագա, **ժայռերի միջով** – տեղի պարագա

34

**Ընդգծվածներից քանի՞սն են նախադասություն:**

- Ամբողջ ժամանակ նրանք անբաժան էին. հրամայողը թգուկն էր, **հպատակվողը՝ հսկան:**
- Ինձ թվում էր, որ այս պատիկ մարդը ճիգ էր անում **իր հասակից քարձր երևալ:**



- **Քանի քաղաքից հեռանում ես**, այնքան նա պայծառանում է՝ անընդհատ պտտվելով ինքն իր շուրջը:
- **Ահա քե ինչ**, ուրեմն երազս վերջապես իրականանում է, և ես պիտի ճամփորդեմ:

**35** **Տրված պնդումներից որո՞նք են սխալ:**

1. **Ու** հոլովման ենթարկվում են **ի**-ով վերջացող բոլոր բառերը, **մարդ, ամուսին, անկողին, աստված** գոյականները և անորոշ դերբայը:
2. **Ա** ներքին հոլովման բոլոր գոյականների գործիականը կարող է կազմվել երկու ձևով, ինչպես՝ **բարությունով // բարությամբ**:
3. Տարվա եղանակների չորս անունները պատկանում են **և՛ ան, և՛ վա** հոլովումների:
4. **Տեր** վերջնաբաղադրիչով բոլոր բառերը ենթարկվում են **ոջ** հոլովման:
5. **Ո** ներքին հոլովման ենթարկվում են **հայր, մայր, եղբայր** բառերը և այն բաղադրյալ բառերը, որոնցում դրանք վերջնաբաղադրիչ են:
6. **Յ** հոլովման ենթարկվում են **անք, ենք, ոնք** ածանցներով բոլոր գոյականները:

**36** **Հատվածներից քանի՞սն են Վ. Տերյանի բանաստեղծություններից:**

- Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց,  
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...
- Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,  
Օղակելով լույս աստղերը մեկմեկու:
- Ծաղիկներին՝ դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,  
Մանուկներին վառ-խլրտուն ասում եմ ես՝ մնաք բարով:
- Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ,  
Արքայական խոսքը մեր կմնա հավետ:

**37** **Ո՞ր շարքի ստեղծագործություններից ոչ մեկի հեղինակը Հ. Մաթևոսյանը չէ:**

- 1) «Արևին», «Նամուս», «Մենք ենք, մեր սարերը»
- 2) «Նարինջ գամբիկը», «Վարք մեծաց», «Հայ ժողովրդի երգը»
- 3) «Ավելորդը», «Քարափը», «Տոհմի կանչը»
- 4) «Համբերանքի չիբուխը», «Աշնան արև», «Հայրենի հողը»

**38** **Ո՞րը դրամատիկական սեռի ստեղծագործություն չէ:**

- 1) «Հարդագողի ճամփորդները» (Ե. Չարենց)
- 2) «Հին աստվածներ» (Լ. Շանթ)
- 3) «Արա Գեղեցիկ» (Ն. Չարյան)
- 4) «Պատվի համար» (Ալ. Շիրվանզադե)

**39** **Ո՞ր պնդումներն են ճիշտ:**

1. Հ. Թումանյանը համոզված էր, որ ժողովրդական բանահյուսությունը կարող է անսպառ նյութ տալ գրողին:
2. Ե. Չարենցի կերտած գանգրահեր տղան խորհրդանշում է հենց իրեն՝ հեղինակին:
3. «Չոն» բանաստեղծության մեջ Գ. Վարուժանն օգտագործել է Վահագնի առասպելի ոճական որոշ հնարքներ:

4. Հայ գրականության մեջ քնարական պոեմի դասական օրինակներ են Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» և Հ. Թումանյանի «Անուշ» պոեմները:
5. Ե. Չարենցի «Տաղարան» շարքը գրված է Նահապետ Քուչակի հայրենների մանողությամբ:
6. «Անլռելի զանգակատուն»-ը Պ. Սևակի առաջին ստեղծագործությունն է:
7. Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը նվիրված է միջնադարյան հայ մատենագիրներին:

40

**Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում դիվանագիտական ի՞նչ հարմար պատասխան է գտնում հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը Աթրի այն հարցին, թե արդյոք հոների համար Հայաստանի վրայով կա ճանապարհ դեպի Բյուզանդիոն:**

- 1) Նկատելով բյուզանդացի զորավար Անատոլի ներկայությունը՝ հրաժարվում է ճանապարհ տրամադրել՝ խուսափելով Բյուզանդիայի հետ առանց այն էլ բարդ հարաբերությունների հետագա վատթարացումից:
- 2) Սիրով խոստանում է ճանապարհ՝ առաջարկելով հայոց ջերմ ընդունելությունն ու աջակցությունը:
- 3) Հոների համար դեպի Բյուզանդիոն տանող ճանապարհը համարում է մշտապես բաց, եթե նրանք դաշինք կնքեն հայերի հետ՝ ընդդեմ պարսից սպասվող պատերազմի:
- 4) Ասում է, որ ճանապարհ կա, բայց վերադարձ չկա՝ ակնարկելով Աթրի՝ իր հետևից թողած սովը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ԳԱԼՍՅԱՆ

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1-	14678
2-	10
3-	1345
4-	2
5-	3
6-	8
7-	1
8-	2
9-	8
10-	45
11-	1
12-	126
13-	135
14-	1
15-	4
16-	3
17-	24
18-	3
19-	4
20-	1
21-	157
22-	1258
23-	3
24-	4
25-	1345
26-	8
27-	234
28-	1
29-	2
30-	2
31-	2
32-	3
33-	1234
34-	3
35-	12346
36-	4
37-	3
38-	1
39-	13
40-	4

Գնահատականը չի կլորացվում: